ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ ԿԱՐԳԱԴՐՈՒԹՅՈՒՆ

ՀՀ, 0015, ք. Երևան, Սիգիշմի 1

№ 1445-Ա « 17 » դեկտեմբերի 2025թ.

«ԵՔ-ԲՄԽԾՁԲ-26/11» ԾԱԾԿԱԳՐՈՎ ԲԱՑ ՄՐՑՈՒՅԹ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԻ ԳՆԱՀԱՏՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ ՁԵՎԱՎՈՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Գնումների մասին» օրենքի 26-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերով և հիմք ընդունելով Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի շինարարության և բարեկարգման վարչության կողմից ներկայացված 2026 թվականի կարիքների համար Երևան քաղաքում հրատապ լուծում պահանջող (վթարավերականգնողական) շինարարական աշխատանքների որակի տեխնիկական հսկողության խորհրդատվական ծառայությունների գնման հայտը.

1. Ձևավորել «ԵՔ-ԲՄԽԾՁԲ-26/11» ծածկագրով բաց մրցույթ ընթացակարգի գնահատող հանձնաժողով և հաստատել դրա ստորև ներկայացվող անհատական կազմը.

Գ. Գրիգորյան	Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի շինարարության և բարեկարգման վարչության պետի տեղակալ /հանձնաժողովի նախագահ/
Ռ. Մասումյան	Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի շինարարության և բարեկարգման վարչության շինարարական օբյեկտների ծրագրի պատասխանատու ինժեներ
Հ. Գյուրջյան	Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի շինարարության և բարեկարգման վարչության շինարարական ծրագրերի կառավարման բաժնի պետ
Լ. Զաքարյան	Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի շինարարության և բարեկարգման վարչության շինարարական ծրագրերի մոնիթորինգի և վերլուծությունների խմբի մասնագետ
Գ. Ութունջյան	Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի շինարարության և բարեկարգման վարչության շինարարական օբյեկտների ծրագրի պատասխանատու ինժեներ

2. Բաց մրցույթ ընթացակարգի գնահատող հանձնաժողովի քարտուղար նշանակել Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի գնումների վարչության ծառայությունների գնումների բաժնի առաջատար մասնագետ Ա. Ամիրխանյանին:

3. Բաց մրցույթ ընթացակարգի գնահատող հանձնաժողովի քարտուղարին՝ բաց մրցույթ ընթացակարգի գնահատող հանձնաժողովի առաջին նիստը հրավիրել սույն կարգադրությունը

ուժի մեջ մտնելուն հաջորդող երեք աշխատանքային օրվա ընթացքում, Երևանի քաղաքապետարանի վարչական շենքում (ք. Երևան, Արգիշտիի փողոց հ. 1, հ. 126 սենյակ):

4.Բաց մրցույթ ընթացակարգի գնահատող հանձնաժողովին՝ հանձնաժողովի գործունեությունը կազմակերպել գնումների մասին ՀՀ օրենսդրությանը համապատասխան:

5. Սույն կարգադրության կատարման կազմակերպումն ու պատասխանատվությունը դնել Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի գնումների վարչության պետի վրա:

6.Սույն կարգադրության կատարման հսկողությունն իրականացնում է Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի քարտուղարը:

ՏԻԳՐԱՆ ԱՎԻՆՅԱՆ